

Սպասարկման բաժին



Ազգային գրադարանի ծառայություններից կարող են օգտվել ՀՀ 17 տարին լրացած բոլոր քաղաքացիները, ինչպես նաև այլ երկրներից Հայաստան ժամանած հյուրերը: Ազգային գրադարանից օգտվելու համար անհրաժեշտ է ընթերցողական տոմս, որը տրվում է սպասարկման բաժնի Ընթերցողների գրանցման և ընթերցողական կատալոգների ենթաբաժնում: Ընթերցողական տոմս ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել անձնագիր և 2 լուսանկար (3x4 չափի):


Սպասարկման բաժնի հիմնական գործառույթը՝ տարբեր մասնագիտությունների ընթերցողների, ուսանողների, 17 տարին լրացած քաղաքացիների գրադարանային սպասարկումն է:

Ընթերցողների սպասարկումը իրականացվում է գրադարանի Սպասարկման բաժնի ընթերցասրահներում:

Բաժինն ունի 6 ենթաբաժին.

1. Ընթերցողական կատալոգների և ընթերցողների գրանցման ենթաբաժին
2. Գիտաշխատողների և մամուլի ընթերցասրահ
3. Ընդհանուր ընթերցասրահ
4. «Արև» ընթերցասրահ
5. Ատենախոսությունների և սեղմագրերի ենթաբաժին
6. Տացքակետի ենթաբաժին

Ընթերցողական կատալոգների ենթաբաժնում ընթերցողները գրականությունը ընտրում, փնտրում և պատվիրում են օգտվելով տպագիր այբբենական, կարգային գրացուցակներից, ինչպես նաև համահավաք էլեկտրոնային քարտարանից (ALEPH): Ընթերցողները համահավաք էլեկտրոնային քարտարանից օգտվում են նաև Սպասարկման բաժնի ընթերցասրահներում, պատվերների պատասխանատուներն են ընթերցասրահի վարիչները: Պատվիրաթերթիկները ուղարկվում են ընթերցասրահից տացքակետ և ապա գրապահոց: Գրականությունը սպասարկվում է 1 ժամվա ընթացքում:



Ընթերցողական կատալոգների ենթաբաժնում ընթերցողները լրացնում են «Հետադարձ կապ» թերթիկը, որտեղ նշվում է ընթերցողների տվյալները և գրքի տվյալները, որը կցանկանար ընթերցողը կարդալ: «Հետադարձ կապ» թերթիկների ցուցակը ներկայացվում է Համալրման բաժին, նշված գրականությունը ձեռք բերելու նպատակով:

Գիտական ընթերցասրահը սպասարկում է հումանիտար, բնական, տեխնիկական գիտությունների բնագավառների գիտաշխատողներին և մասնագետներին:

Մամուլի ընթերցասրահը սպասարկում է թերթերը և ամսագրերը /պարբերական մամուլ/ընթերցողական բոլոր խմբերին:

Ընթացիկ մամուլից բացի, ընթերցասրահը պատվիրաթերթիկների միջոցով ընթերցողներին սպասարկում է նաև գրադարանի գրապահոցում պահպանվող ամբողջ պարբերական մամուլի հարուստ արժեքավոր ֆոնդը:

Մամուլի ընթերցասրահից օգտվում են ընդհանուր ընթերցասրահի և գիտական ընթերցասրահի ընթերցողները: Ընթացիկ մամուլից օգտվում են առանց պատվիրելու, տեղում: Ազգային գրադարանի տնօրենի 15 փետրվարի 2016 թվականի N 14-Լ «Գրականության հանձնման և ընդունման մասին» հրամանի համաձայն սպասարկման բաժնի գիտական և մամուլի ընթերցասրահի ընթերցողների սպասարկման որակի բարելավման նպատակով՝ ստեղծվել է անկախության տարիներին տպագրված, մեծ պահանջարկ ունեցող մամուլի առձեռն հավաքածու: Ընդհանուր ընթերցասրահը սպասարկում է բուհերի, վարժարանների, քոլեջների ուսանողներին, 17 տարին լրացած քաղաքացիներին:

Ընդհանուր ընթերցասրահում ընթերցողներին պատվերների միջոցով սպասարկում են գրքեր, թերթեր և ամսագրեր: Ընդհանուր ընթերցասրահում է գտնվում «Չինական անկյուն»-ը և ՄԱԿ-ի ավանդապահ գրադարանը, որտեղ ցուցադրված են գրքեր և ընթերցողները կարող են օգտվել համապատասխան գրականությունից: Ընդհանուր ընթերցասրահում մասնագիտական գրականության բաց դարակային սպասարկում է կազմակերպվում:

Գրադարակներում առանձնացված է.

1. Հանրագիտարան - բառարան
 2. Գրականություն – գրականագիտություն
 3. Տնտեսագիտություն – պատմություն
 4. Պարտադիր ընթերցանություն
 5. Ցեղասպանություն–պատմություն խորագրերով մասնագիտական գրականությունը, որը համալրվում է Համալրման բաժնից ստացվող նոր գրքերով:
- «Արև» ընթերցասրահի գործառույթն է՝ կույր և տեսողական խնդիրներ ունեցողների սպասարկումը:

«Արև» ընթերցասրահը բացվել է 2008թ.-ի հոկտեմբերի 7-ին VIVA CELL MTS-ի տնօրեն Ռալֆ Յիրիկյանի հովանավորությամբ: «Արև»-ի համակարգը մշակված է Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի կողմից:

Համակարգը նախատեսված է տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց համար և նպատակ ունի ապահովելու հայերեն լեզվով նրանց հաղորդակցումը համակարգչի հետ: «Արև» ծրագիրը իր մեջ ունի գրաֆիկական և երաժշտական գրադարաններ, ինչպես նաև «Շախմատային խաղընկեր» բաժին : «Արև» ընթերցասրահում ընթերցողներին սպասարկվում է նաև բրայլյան գրականություն:

Ատենախոսությունների և սեղմագրերի ենթաբաժինը սպասարկում է 1993թ.-ից ՀՀ-ում պաշտպանված ատենախոսությունները և դրանց սեղմագրերը: Ատենախոսությունների և սեղմագրերի ենթաբաժնում կարող են անվճար օգտվել Ռուսաստանի պետական գրադարանի ատենախոսությունների և սեղմագրերի էլեկտրոնային շտեմարանից: Ընթերցողները կարող են օգտվել նաև «Հայաստանի ատենախոսությունների բաց մատչելիության պահոց»-ում մուտքագրված ատենախոսություններից և սեղմագրերից:

Ընթերցողների պատվերների հիմնական մասը բավարարվում է գրադարանի Գլխավոր գրապահոցի ֆոնդից՝ պատվերների միջոցով: Տարվա ընթացքում Գլխավոր գրապահոց մուտք է գործում շուրջ 100 հազար ընթերցողական պատվիրաթերթիկ: Գրականության տացքը կազմում է 1500000 միավոր: Տարվա ընթացքում ընթերցասրահներում սպասարկվում է մոտ 22000 ընթերցող: Ընթերցողների հաճախումը կազմում է 246500:

Սպասարկման բաժնի ընթերցասրահներում կազմակերպվում են տարեկան 6-7 գրականության ցուցադրություն-միջոցառումներ: Բաժնի աշխատողները հանդես են գալիս գրադարանային գործի վերաբերյալ զեկույցներով:



[ՄԱԿ-ի ավանդապահ գրադարան](#)
[Չինական կենտրոն](#)